



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



**TRANSPARENCY  
INTERNATIONAL**  
anticorruption center



**ENGAGED  
CITIZENRY**  
RESPONSIBLE  
GOVERNANCE



## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

«ՊԱՐԱՄԱՌԻՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ, ՄԵՂՐԱԶՈՐԻ ՈՍԿԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ  
ԼՈՒՍԱԶՈՒՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Մույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից  
իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների  
պատասխանատվությունը ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն  
իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ  
հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից  
իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու  
կառավարման» ծրագրի շրջանակներում:*

# 1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակիր համայնքների վերաբերյալ

«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ն ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրի Լուսաջուրի տեղամասի ընդերքօգտագործման իրավունքը ստացել էր ՇԱԹՎ-29/089 12.06.2012թ թույլտվությամբ:

Ընկերությունն օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները մինչ 2020 թվականի ավարտը չէր իրականացրել: Չէր իրականացրել օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին համապատասխան աշխատանքները և չէր ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:

Ընկերության նկատմամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 02.03.2020թ. թիվ 295-Ս հրամանի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ, ինչի արդյունքում էլ ՀՀ ՏԿԵ նախարարի 07.08.2020 թվականի թիվ 1074-Ս հրամանով դադարեցվել է «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲ ընկերության ՇԱԹՎ 29/169 12.06.2012թ. ընդերքօգտագործման իրավունքը, լեռնահատկացման 04.04.2014 թիվ ԼՎ-089 ակտը և լուծվել 12.06.12թ. ՊՎ-089 ընդերքօգտագործման պայմանագիրը:

Հրամանի հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ընկերությունը մինչև 2020թ-ի հուլիս ամիսը համայնքի հետ չի կնքել հողօգտագործման պայմանագիր, որպես օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձ արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին համապատասխան չի իրականացրել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ և չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:

Համաձայն ՀՀ ՏԿԵ նախարարության կայքի<sup>1</sup> տվյալների, 2021թ. հունվարի 14-ի դրությամբ նախարարի 07.08.2020 թվականի թիվ 1074-Ս հրամանը բողոքարկվել է Ընկերության կողմից:

«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի ընդերքօգտագործման թույլտվությունն է ՇԱԹՎ-29/089, ընդերքօգտագործման պայմանագիրը՝ 12.06.2012թ, ՊՎ-089, շահագործման թույլտվության ժամկետը՝ 12.06.2012թ. մինչև 01.04.2035թ., հատկացված հանքավայրի մակերեսը՝ 35,9 հա: Հաստատված պաշարը՝ հանքաքար՝ 1 845,3 հազ.տ, ոսկի՝ 18 480,39կգ, արծաթ՝ 33320,59 կգ, թելուր՝ 2332,0կգ, բիսմութ՝ 15981կգ, հանքաքարի տարեկան արդյունահանվող թույլատրվող պաշարը՝ 150.0 հազ. տոննա:

ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունը բացակայում է Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) կայքում: Նախկինում տրամադրված օգտակար հանածոյի

<sup>1</sup> <http://www.mtad.am/hy/mtad27.12/>

արդյունահանման աշխատանքային նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու մասին Ընկերությունը դեռևս 2015թ. հունիսին տեղեկացվել է ՀՀ բնապահպանության նախարարի կողմից, քանի որ, փորձաքննական եզրակացության տրվելուց հետո մեկ տարվա ընթացքում նախատեսվող գործունեություն չի իրականացվել /համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ կետի/:

### 1.1 Ազդակիր համայնքի մասին`

ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր

Բնակչության թիվը` 2665, որից տղամարդիկ` 1298, կանայք` 1367, նպաստառու ընտանիքների թիվը` 80, թոշակառուների թիվը` 250: Համայնքում առկա է թվով վեց բազմաբնակարան շենք` 154 բնակարանով, որտեղ ապրում են հիմնականում դրսեկ հայեր, այդ թվում 25 ծուխ Ադրբեջանից փախստական հայեր:



Նկար 1.2. Մեղրաձոր գյուղ

Գյուղում գործում են հիմնանորոգված դպրոցը 294 աշակերտով, մանկապարտեզը` 30 երեխայով, «Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը, որը սպասարկում է նաև մոտակա հինգ գյուղերի բնակիչներին: Գյուղում արտադրական ձեռնարկություններ չկան: Գյուղում գործում է «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ն:

Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղացիական տնտեսությունն է /անասնապահություն, հողագործություն և մեղվաբուծություն/, ինչպես նաև արտագնա աշխատանքը (ըստ համայնքապետի` տարեկան 350-400 մարդ) և զբաղվածությունը «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ում: Անտառամերձ գոտու և տեսարժան վայրերի առկայությունը տալիս է տուրիզմի զարգացման հնարավորություն:

Համայնքի հիմնախնդիրներն են` ոռոգման ջրի անբավարարության պատճառով տեղի ունեցող մշակովի հողերի անապատացման երևույթները և լքված թունելների փլուզման սպառնալիքը, աշխատատեղերի բացակայությունը, բնակչության արտագաղթը:

## 1.2 «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի իրական սեփականատերերի մասին

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ռեգիստրի<sup>2</sup> Ընկերությունը գրանցվել է 2011թ. դեկտեմբերի 30-ին: Հայտարարագրում բացահայտված է 4 իրական սեփականատեր<sup>3</sup>:

Առաջին իրական սեփականատերը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ռոման Տրոցենկոն է, ով սեփականության իրավունքը ձեռք է բերել 14.07.2020 թվականին և տիրապետում է բաժնետոմսերի 48,8295%-ին:

Երկրորդ իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Տիգրան Արզաքանյանն է՝ 29% բաժնեմասով (1131568 բաժնետոմս):

Երրորդ իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Սմբատ Նասիբյանն է՝ 20% բաժնեմասով (780392 բաժնետոմս):

Չորրորդ իրական սեփականատերը «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի տնօրեն Արտյոմ Պետրոսյանն է: Նրա մասնակցության չափի վերաբերյալ տվյալներ չկան:

Այսպես, հայտարարագրում առկա են տվյալներ Ընկերության 97.8295% բաժնեմասի սեփականատերերի վերաբերյալ, իսկ մնացած 2,1705% բաժնեմասի սեփականատերը մնում է անհայտ:

### Իրական սեփականատերերի միջանկյալ ընկերություններն են

Առաջին իրական սեփականատեր Ռոման Տրոցենկոնի համար որպես անուղղակի միջանկյալ ընկերություն է հանդիսանում Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում գրանցված «Ստարտ Աերո» ՍՊԸ-ն /գործադիր տնօրեն՝ Նատալիա Կալիտուրինա/, որն իր անուղղակի մասնակցությունն իրականացնում է Կիպրոսյան «Նակիլեպ Օվերսիզ Լիմիթիդ» կազմակերպության կանոնադրական կապիտալում անուղղակի մասնակցությամբ: Այս կազմակերպության գործադիր տնօրենն է Թեոփանիա Լագոսը:

Միջանկյալ իրավաբանական անձը կանոնադրական կապիտալում նշված անուղղակի մասնակցությունն իրականացնում է Կիպրոսի Հանրապետությունում գտնվող «Գեոպրոմայնինգ Ինվեսթմենթ (ՄԻՓ) Լիմիթեդ»-ի /գործադիր մարմնի ղեկավար Ռոման Խուդոլի/ կանոնադրական կապիտալում անուղղակի մասնակցության միջոցով: Իսկ «Գեոպրոմայնինգ Ինվեսթմենթ (ՄԻՓ) Լիմիթեդ»-ի մասնակցությունն ընկերության կանոնադրական կապիտալում ապահովում է Նիդեռլանդներում գտնվող «Կառլոու Բ.Վ»-ն: Վերջինիս մասնակցությունն էլ ապահովվում է կրկին Նիդեռլանդներում գտնվող «Ջի Փի Էմ Արմենիա Բի. Վի.»-ի միջոցով: Այս ընկերությունն էլ իր հերթին՝ Լյուքսեմբուրգում

<sup>2</sup> <https://www.e-register.am/am/companies/1267410>

<sup>3</sup> <https://www.e-register.am/am/companies/1298502/beneficiary.pdf>

գտնվող «Էյ Էմ Ջի Էմ Ս.ա.ր.լ»-ի միջոցով: «Ջի Փի Էմ Արմենիա Բի. Վի.»-ի և «Էյ Էմ Ջի Էմ Ս.ա.ր.լ»-ի գործադիր մարմնի ղեկավարը ՌԴ քաղաքացի, «ԳեոՊրոՄայնինգ» իսրի ֆինանսական գծով տնօրեն Օլեգ Բելյանն է:

Իրական սեփականատեր N2 Տիգրան Արզաքանցյանի համար որպես միջանկյալ իրավաբանական անձ նշվում է Լյուքսեմբուրգում գրանցված «Էյ Էմ Ջի Էմ Ս.ա.ր.լ»-ը, որի գործադիր տնօրենը նույնպես ՌԴ քաղաքացի Օլեգ Բելյանն է:

Երրորդ իրական սեփականատեր Սմբատ Նասիբյանի համար որպես միջանկյալ ընկերություն գործում է Լյուքսեմբուրգում գրանցված «Էյ Էմ Ջի Էմ Ս.ա.ր.լ»-ը:

Չորրորդ իրական սեփականատեր «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի տնօրեն Արտյոմ Պետրոսյանն է համար միջանկյալ ընկերություններ հայտարարում նշում չկա:

## **2. «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի ստանձնած պարտավորություններն ըստ 12.06.2012թ. ՊՎ-089 ընդերքօգտագործման պայմանագրի**

### **2.1. Սոցիալական պարտավորություններ**

12.06.2012թ. ՊՎ-089 ընդերքօգտագործման պայմանագրում թվային առումով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին մասնակցության կոնկրետ պարտավորություններ նշված չեն, բացի համայնքի սոցիալական ծրագրերին մասնակցության ընդհանուր դրույթների:

### **2.1.1 Համայնքների նկատմամբ ստանձնած պարտավորությունների փաստացի կատարողականը**

Տարիներ շարունակ գործունեություն չձավալելու, ինչպես նաև 28.12.2012թ. ՊՎ-089 ընդերքօգտագործման պայմանագրով սոցիալական պարտավորություն չստանձնելու պատճառով որևէ սոցիալական կամ բարեգործական աջակցություն չի ցուցաբերել համայնքին:

### **2.2 Բնապահպանական պարտավորություններ**

Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է՝

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
3. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությանը նախատեսված պայմանները:
4. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործելու համար:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարել բնության և շրջակա միջավայրի դրամագլխի և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարները:

### 2.2.1 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն ազդակիր Մեդրաձոր համայնքի ղեկավարի և բնակչության շրջանում 2020 թվականի սեպտեմբերին անցկացրած հարցումներից, ինչպես նաև ՀՀ ԱՃԹՆ-ի կայքում տեղադրված Ընկերության և պետական մարմինների հաշվետվություններից պարզ դարձավ, որ Ընկերությունը չի կատարել ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած որևէ պարտավորություն, բացառությամբ շրջակա միջավայրի դրամագլխին 2018 թվականին կատարած 6241600 դրամով համալրման (տվյալը վերցված է ՇՄ նախարարության 2018 թվականի հաշվետվությունից):

### 2.3 Հանքի փակում, ֆինանսական երաշխիքներ

Ընդերքօգտագործման պայմանագրում, որպես առանձին հավելված, չի ներկայացված հանքի փակման միջոցառումների ծրագիրը, դրա ֆինանսական երաշխիքները և գործողությունները, սակայն պայմանագրի 3.3՝ «Ընդերքօգտագործողը պարտավոր է» բաժնում արձանագրված է, որ անհրաժեշտ է ապահովել հանքի փակման ծրագրի, այդ թվում հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը: Խախտվել են ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման պահանջները: Միաժամանակ, ընդերքօգտագործման հայտի քննարկման գործընթացում չեն պահանջվել հանքի փակման ծրագիրը, ինչը հանդիսանում է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի գ) ենթակետի խախտում:

### 3. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում<sup>4</sup> հրապարակված «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունում ներկայացված տվյալները

Տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	0	0	
Շահութահարկ, դրամ	Հաշվարկված՝ 3899099 Վճարված՝	Հաշվարկված՝ 3656560 Վճարված՝ 15181320	Հաշվարկված՝ 41837958 Վճարված

<sup>4</sup> <https://reports.eiti.am/hy/>

	32495134		41837958
Եկամտային հարկ, դրամ	Հաշվարկված, 5078890 Վճարված՝ 25198000	Հաշվարկված՝ 17917845 Վճարված՝ 43147550՝	Հաշվարկված, 9248000, Վճարված 9428000՝
Ավելացված արժեքի հարկ, դրամ	0	0	0
Ակցիզային հարկ, դրամ	0	0	0
Ռոյալթի, դրամ	0	0	0
Բնօգտագործման վճար, դրամ	0	0	0
Բնապահպանական վճարներ, դրամ	0	0	0
Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ	0	0	0
ՇԹ Պետտուրք, դրամ	Հաշվարկված՝ 10000000, Վճարված՝ 10000000	Հաշվարկված՝ 10000000, Վճարված՝ 10000000	Հաշվարկված՝ 10000000, Վճարված՝ 10000000
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	0	0	0
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ	0	0	0
Գույքահարկ (Մեղրաձոր գյուղ), դրամ	0	0	0
Հողի հարկ (Մեղրաձոր գյուղ), դրամ	0	0	0
Վարձակալություն (Հոդամաս), դրամ	0	0	0
Վարձակալություն (Անշարժ գույք)	0	0	0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	0	0	0
Սոց.-տնտ. պարտավորություն (Մեղրաձոր գյուղ)	0	0	0
Բարեգործական	0	0	0

հատկացումներ (Մեղրաձոր գյուղ)			
Ոչ ֆինանսական օգնություն	0	0	0
Տուգանք, դրամ	0	0	0
Աշխատատեղեր, մարդ	2	3	2
Անհատույց օտարումներ	0	0	0

#### 4. Ընկերության և պետական մարմինների ներկայացրած տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծություն 2016-2018թթ-ի համար

- Ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ԱՃԹՆ 2016-2018թթ. հաշվետվությունների մեջ տարբերություններ չկան:
  - Ընկերության և Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) ԱՃԹՆ 2016թ հաշվետվությունների մեջ կան զգալի տարբերություններ: Մասնավորապես, Ընկերության այդ տարվա հաշվետվության մեջ նշված է, որ այդ տարվա համար հաշվարկել և վճարել է շահութահարկ և եկամտահարկ, ինչպես նաև ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 մլն. դրամ պետական տուրք, մինչդեռ ՊԵԿ-ի հաշվետվության մեջ նշված է, որ այդ բաղադրիչներով որևէ վճարում չի կատարել<sup>5</sup>, նույնը վերաբերվում է նաև 2017թ. հաշվետվություններին<sup>6</sup>: Ըստ 2018թ-ի ՊԵԿ-ի հաշվետվության<sup>7</sup> հաշվետու տարում միասնական հաշվից և գանձապետական այլ հաշիվներից մարվել է (վճարված), ինչպես նաև մաքսային մարմնում վճարված (ներառյալ տույժերը և տուգանքները) 6593488 դրամ շահութահարկ, իսկ Ընկերության հաշվետվությամբ՝ 41837958 դրամ: Նույն տարում, ըստ ՊԵԿ-ի, մարվել է 5523233 դրամ եկամտահարկ, ըստ Ընկերության՝ 9428000 դրամ:
  - Ընկերության և ՇՄ նախարարության 2018 թվականի հաշվետվությունների «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում» բաժնի միջև առկա են էական անհամապատասխանություններ: Մասնավորապես, ըստ Ընկերության 2016-2018թթ. հաշվետվությունների, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (բազային չափը՝ 25176600 դրամ) համալրում չի կատարել: Սակայն ՇՄ նախարարության 2018թ. հաշվետվության նույն բաժնում նշվում է, որ տվյալ տարվա համար հաշվարկված է 891680 դրամ, վճարված է 6241600 դրամ:
- Տվյալների այս անհամապատասխանությունը հնարավորություն չի տալիս ճշտելու իրականությունը և մի անգամ ևս շեշտում, որ ԱՃԹՆ հաշվետվությունների ընդունման համակարգում առկա է խնդիր:

<sup>5</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=3>

<sup>6</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=3>

<sup>7</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=3>



## **5. «Պարամատուտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի կողմից 2016, 2017, 2018 թվականներին Մեղրաձոր համայնքի բյուջեին կատարած վճարումների մասին**

- 2016թ., 2017թ., և 2018թ. Մեղրաձոր համայնքին գույքահարկ չի վճարել:
- 2016թ., 2017թ., և 2018թ. Մեղրաձոր համայնքին չի վճարել հողի հարկ:
- Հողամասերի, փոխադրամիջոցների վարձավճարներ ոչ մի տարի չի կատարել:
- Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ ընդերքօգտագործման պայմանագրում չի նախատեսվել:
- Ընդերքօգտագործողի կողմից 2016-2018թթ. համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ՝ չի կատարել:

## **6. Ընկերության կողմից 2016- 2018 թվականներին շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին, մշտադիտարկումների համար, բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին**

- Ըստ Ընկերության 2016-2018թթ. Հաշվետվությունների՝ Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (բազային՝ 25176600 դրամ) համալրում չի կատարել, սակայն ՇՄ նախարարության 2018թ. հաշվետվության նույն բաժնում նշվում է, որ տվյալ տարվա համար հաշվարկված է 891680 դրամ, վճարված է 6241600 դրամ<sup>8</sup>, այսինքն, Ընկերությունը 2018թ. մարել է նախորդ տարիներին կուտակված գումարները:
- «Պարամատուտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի համար մշտադիտարկումների իրականացման վճար սահմանված չէ, Ընկերությունը համապատասխան կուտակային հաշվին հատկացումներ այդ տարիներին չի կատարել:
- «Պարամատուտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ն բնապահպանական և բնօգտագործման վճարներ այդ տարիների համար չի հաշվարկել և չի վճարել՝ համաձայն սեփական և ՊԵԿ-ի հաշվետվությունների:

## **7. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ**

Քանի որ «Պարամատուտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ն մինչև 2019թ-ը ընդգրկված չի եղել Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված կազմակերպությունների ցանկում, Մեղրաձոր համայնքը գործնականում որևէ սուբվենցիոն գումար չէր կարող ստանալ բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար:

## **8. Համայնքային զարգացման ծրագրում Ընկերության ներգրավվածության մասին**

Մեղրաձոր համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրում հաշվի չի առնված «Պարամատուտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի գործոնը: Հանքարդյունահանող

<sup>8</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=1>,

ընկերություններից նշվում է միայն ոսկու հանքի արդյունաբերությամբ զբաղվող «Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ-ն, որտեղ աշխատում է 110 մարդ:

Որպես համայնքի ուժեղ կողմ՝ զարգացման Ծրագրում նշվում է տարածքում ոսկու հարուստ պաշարների առկայությունը<sup>9</sup>: Համայնքի զարգացման հնարավորություններն, ըստ զարգացման ծրագրի, տուրիզմի կենտրոն դառնալն է և լեռնահանքային արդյունաբերության ոլորտում տեղական աշխատուժի օգտագործումը: Համայնքային բյուջեի ձևավորման մեջ մեծ տեղ է հատկացված համայնքային հողերի և հողամասերի վարձակալությունից սպասվող հարկերին և տուրքերին /ըստ այդ ծրագրի՝ ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի մակերեսը կազմում է 46,45 հա/: Ծրագրով նախատեսվում է հինգ տարում իրականացնել 11 միջոցառում, որից 4-ի՝ «Խմելու ջրագծի կապիտալ վերանորոգում», «Շենքերի տանիքների կապիտալ վերանորոգման», «Մարզամշակութային կենտրոնի շենքի ցանկապատում, մասնակի նորոգում և ջեռուցման համակարգի կառուցման», «Կոյուղու կառուցման» իրականացման համար պակասող 104,0 մլն. դրամ գումարը ակնկալվում է, որ կֆինանսավորվի դոնոր կազմակերպությունների կողմից: Ըստ ամենայնի, Ծրագրի հեղինակներն ակնկալել են, որ «դոնորներից» կլինի նաև իրենց վարչական տարածքում գործունեություն իրականացնող «Պարամաունտ Գոլդ Սայնինգ» ՓԲԸ-ն, սակայն այդ մասին ուղղակիորեն չի նշվում:

## **9. Այցելությունների արդյունքում հարցումների վերլուծություն**

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն ազդակիր Մեդրաձոր համայնքի ղեկավարի և բնակչության շրջանում 2020 թվականի սեպտեմբերին անցկացրեց հարցում՝ սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի շուրջ՝ նպատակ ունենալով պարզել բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը Մեդրաձորի հանքավայրի Լուսաջուրի տեղամասի հետագա շահագործման հարցերի, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ:

Հարցմանը մասնակցել են 8 անձ՝ 3 կին և 5 տղամարդ: Հարցման արդյունքների գերակշիռ մասն արտահայտված են սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝

- Հարցման մասնակիցները կամ իրենց ընտանիքի անդամներից որևէ մեկը երբևէ չեն աշխատել «Պարամաունտ Գոլդ մայնինգ» ՓԲԸ –ում:
- 12.06.2012թ ՊՎ-089 ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:

<sup>9</sup> <http://kotayk.mtad.am/files/docs/24487.pdf>:

- «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի գործունեության մասին որևէ ստույգ՝ փաստաթղթային տեղեկատվություն համայնապետարանը չունի: Ըստ համայնքապետի՝ համայնքային խոշորացումից հետո փաստաթղթերն ուղարկվել են արխիվ: Համայնքապետն իրազեկված չէ ընդերքօգտագործման թույլտվության և պայմանագրային պարտավորությունների մասին:
- Ընկերության և ազդակիր համայնքի միջև համագործակցությունը բացակայել է:
- Մինչ 2020 թվականը համայնքի հետ Ընկերությունը չի կնքել հողերի և այլ անշարժ գույքի դիմաց վարձակալության պայմանագրեր:
- Հարցմանը մասնակից բոլոր անձինք կողմ արտահայտվեցին հանքի շահագործմանը, այն դիտարկելով որպես նոր աշխատատեղերի բացման հնարավորություն, սակայն կարծում են, որ այդ պարագայում պետք է անվերապահորեն պահպանվեն շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելիչ կանոնները, ինչպես նաև հանքավայրի նոր սեփականատիրոջ կողմից համայնքի ընդերքօգտագործման պայմանագրում ամրագրվեն համայնքի սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված շոշափելի սոցիալական աջակցության պարտավորություններ:
- Հանքավայրի շահագործման արդյունքում շրջակա միջավայրի աղտոտվածության հնարավոր ռիսկերի շարքում հարցվածները նշում են ծառերի և մշակովի բույսերի չորացումը, հողերի բերրիության անկումը, տեղական գյուղատնտեսական մթերքի իրացման գործընթացում հնարավոր խոչնդոտների ծագումը, հողերի և խմելու ջրի աղտոտման արդյունքում առողջական խնդիրների առաջացման վտանգները, արոտավայրերի կրճատման և աղտոտվածության պատճառով անասունների գլխաքանակի անկումը:
- Շրջակա միջավայրի աղտոտվածության մասին համայնքի բնակչության իրազեկվածության մակարդակը բավարար չէ:
- Հարցման մասնակիցների կարծիքով «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի կողմից շրջակա միջավայրի աղտոտվածության և խախտված հողերի հետևանքների պատասխանատվությունը պետք է կրի Ընկերությունը:
- Որպես համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրներ հարցման մասնակիցները դիտարկում են ցածր աշխատավարձը, հողատարածքների համար ոռոգման ջրի պակասը, համայնքում աշխատատեղերի բացակայությունը, միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը:
- Որպես համայնքի զարգացման տեսլական հարցվածները դիտարկում են տուրիզմի և գյուղատնտեսության զարգացումը, անթափոն և մաքուր տեխնոլոգիաներով նոր աշխատատեղերով հանքարդյունահանման զարգացումը:

- Համայնքում առողջապահության մակարդակի բարելավման համար, ըստ հարցվածների, անհրաժեշտ է «Մեդրաձորի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը համալրել բարձր որակավորում ունեցող մասնագետներով և ժամանակակից սարքավորումներով, բժշկական անձնակազմի համար կազմակերպել որակավորման և վերապատրաստման դասընթացներ:

## 9. Եզրակացություն

1. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքներն առ 2020 թվականի ավարտը չի սկսել՝ չապահովելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, խախտելով Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մասի պահանջները:
2. Ընկերությունը բնապահպանական և բնօգտագործման հարկեր չի հաշվարկել և չի մուծել, հողի հարկ չի մուծել՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 69-րդ հոդվածի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները: Այսինքն, իր անգործությունը բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա:
3. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
4. Ընկերությունը ՀՀ Կոտայքի մարզի Մեդրաձոր համայնքի հետ չի կնքել հողի օգտագործման պայմանագիր և չունի հողի օգտագործման իրավունք:
5. 12.06.2012թ. ՊՎ-089 ընդերքօգտագործման պայմանագիրը կնքվել է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների խախտմամբ, այն չունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ:
6. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
7. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները:
8. Այս Ընկերության, ինչպես նաև մի քանի այլ ընկերությունների համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել, ինչը ՀՀ

Կառավարության 10 հունվարի 2013 թվականի «Օգտակար հանաձոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» N 22-Ն որոշման պահանջների խախտում է:

9. Ընկերությունն իր գործունեության ընթացքում չի ապահովել աշխատանքների և իրագործվող ծրագրի թափանցիկությունն ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակայնության նկատմամբ:

10. ԱՃԹՆ համակարգն ունի պետական մարմինների և Ընդերքօգտագործողների հաշվետվությունների հավաստիության և համադրելիության խնդիր:

*Մույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*